Վասն որոյ և մեք ի մեր կողմանէ ի նոյն սէր փոխադարձ վստահ զՁեզ առնելով փութամբ յայտնել և զմերն ակնածութիւն ի վերայ եկեղեցւոյն այնորիկ, յորոյ վերայ Նախախնամութիւնն Աստուծոյ Տեսուչ զՁեզ կացուցանէ։

Եւ և-ս առաւել բարւոք մնայց Սրբազնութեան Ձերոյ ի թղթոյ անտի տեղեկացեալք, խնդամբ մեծապէս, զի զգութ խնամոց Ձերոց ընդարձակել կամելով առ աղքատս և տնակս գտեալս մինչեւ ի սփիւռս, առ ի բարւոք տնտեսութիւն կարեաց նոցին ի հեռաւոր վայրս զԲննիչ պաշտօնեայն առաքել յօժարիք, զի զպէտս նոցին լնուլ մարթասցէ։

Ամենաբարին Աստուած հատուսցէ Ձեզ ի գանձուց շնորհայ իւրոց զփոխարէնն գիւցազնական Ձերումդ առաքինութեան վասն գթոյն այնորիկ զոր տածէքդ ի վերայ քրիստոնէիցն տառապելոց, որք ընդ ծանր լուծով հեծեն անհաւատից։

Հուսկ ուրեմն զեղբայրականն մեր սիրելութիւն պարզելով առաջի Ձերումդ Սրբազնութեան՝ մաղթեմք ի Տեառնէ զԱստուածային զմշտառատ օրհնութիւն ի վերայ Ձերումդ Սրբազնութեան, և ի վերայ ամենայն Հօտիդ՝ որ ի խնամս Ձեր է յանձնեալ։

Ձերումդ Սրբազնութեան սիրեցեալ եղբայր
և անձանուէր բարեկամ ի Քրիստոս Աստուած մեր և Տէր,
Տեղակալ Ատենապետի Սինոդի ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Ի Ս. Էջմիածին
(Ընդ նոր թուոց.) Սեպտ. 21, 1884.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

—

(ՍԻՆՕԴԻ ՅՈՒԼԻՍ ԱՄՍՈՑ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՔ)

ՎԱՐՉԱԿԱՆՔ

23 Յուլիսի. Ալէքսանդրապոլու Հոգեւոր կառավարութիւնը ի 10-ն Հոկտմ. անցեալ 1883 ամի յայտարարութեամբ ներկայացնումէ Սինոդին Հաճի-Նազարցի Մանուկ Ստեփանեանի խնդիրը, որով յիշեալ անձն զանազան բարուրանօք գանգատում է, թէ իւր բացակայութեամբ

Երեւանայ և Կարուց թեմերի Թեմական Տեսչի պաշտօնակատար Պ. Պռոշեանը Աղքիլիսու Խաչատուր քահանայ Տէր Գէորգեանի հետ աւետարանը եկեղեցի փոխադրելու համար իւր տունը մտնելիս անհետացել է 590 ր։ Այս մասին Ալէքսանդրապօլու գաւառապետի հրամանով կատարված քննութիւնից երևում է որ Պ. Պռոշեանը Հոգևոր իշխանութիւնից յանձնարարութիւն ունենալով ձեռագիր ուխտագնաց աւետարանները տներից եկեղեցի փոխադրել՝ Հաճի Նազարում Գէորգ Աֆանդեանի, Գէորգ Տօնոյեանի և Առաքել Պետրոսեանի աւետարանները եկեղեցի փոխադրելուց յետոյ, որովհետև Մանուկ Ստեփաննոսեանը տանը չէ եղել, ուստի ներկայութեամբ մի քանի գիւղացիների տանուտէրի օգնականի և գործակալ Խաչատուր քահանայ Տէր Գէորգեանի՝ մտել է տուն՝ որի դուռը բացել է տան տիկինը ու հեռացել։ Տեղւոյն մթութեան պատճառով Պ. Պռոշեանը լուցկի է խնդրել Աւետարանը գտնելու համար, երբ այդ մտադրութիւնը չէ կատարուել, թողել է յետ դարձել, Մանուկի եղբայր Ղազարից ստորագրութիւն առնելով, որ Մանուկի վերադարձից յետոյ Աւետարանը կը փոխադրեն եկեղեցի։ Իսկ Մանուկ Ստեփանեանը այս տարաձայնութիւնները հանել է, որպէս զի յետաձգի Աւետարանի եկեղեցի փոխադրելը և միջոց ունենայ շահուել Աւետարանին անուամբ եկած ուխտաւորների նուէրներից։

Սինոդը ի նկատի ունելով Ալէքսանդրապօլու գաւառապետի հրամանով կատարած քննութիւնը, որով Մանուկ Ստեփաննոսեանի բողոքը միմիայն զրպարտութիւն է յայտնվում՝ որոշեց Ա. Մանուկ Ստեփաննոսեանի բողոքը առանց հետևանքի թողնել, և Ալէքսանդրապօլու գաւառապետից խնդրել, որ եթէ Մանուկ Ստեփաննոսեանը կամովին չի փոխադրել Աւետարանը եկեղեցի, ինքն պատշաճաւորն տնօրէնութիւն անէ. Բ. շրջաբերական հրամանով յանուն Կոնսիստորեաների և Հոգևոր Կառավարութեանց պատուիրել, որ ուխտատեղի համարուած Աւետարանները մասնաւոր տներից հանելով՝ փոխադրեն տեղւոյն եկեղեցին. իսկ այլ գրեանքը, որպիսի են Ուրբաթ գիրք, Կիպրիանոս, Ախտարք և ն. ուղարկել Սինոդ։

—

30-ն Յուլիսի, Խաչակապ գիւղի հասարակութեան երկու խնդրագիրները և Ելիսաւէտպոլի Հոգևոր Կառավարութեան 25 Յունիսի տարեոյս յայտարարութիւնը Սինոդը ընդունելով ի յարգանս՝ որոշեց, ըստ ցանկութեան իւրում Նոր Բայազէդու գաւառի Վանէ—Վանի վանից վանահայր Արժ Թէոդորոս Վարդապետ Շիրակունուն նշանակել Խաչակապու Ս. Թարգմանչաց վանուց վանահայր, պատուիրելով Թէոդորոս վարդապետին Վանէ—Վանից վանուց բոլոր կահկարասիքը ցուցակաւ յանձնել Նոր Բայազէդու գործակալ Արժ. Պետրոս վարդապետին և Ս. Թարգմանչաց վանքի խնամակալ Պ. Ներսէս Ներսէոեանից ստանալ ցուցակաւ Ս. Թարգմանչաց վանքի տնային կահ կա-

բասիքը և բոլոր սպասները, յանձնողական և ստացողական ցուցակները թէ Վանէ — Վանի վանից և թէ Ս. Թարգմանչաց վանից առաջարկելով Սինոդին։

—

30 Օգոստոսի. Սինոդը Ախալցխայի Հայազգեաց՝ տարեոյս Ապրիլի 27ին և Յուլիսի 24ին գրած խնդիրների համեմատ Մայր Աթոռոյս միաբան Արժ. Խորէն Վարդապետ Ստեփանէին նշանակեց Ախալցխայի վիճակի յաջորդ և քաղաքի երկսեռ դպրոցների տեսուչ։

—

29 Օգոստոսի. Սինոդը Կարմիր վանից նախորդ վանահայր և Սինոդի անդամ Գեր. Յովակիմ Եպիսկոպոսին իւր խնդրանաց համեմատ արձակելով յիշեալ վանուց վանահայրութիւնից, տեղը նշանակեց Հին Նախիջևանի յաջորդ Գեր. Յովհաննէս Եպիսկոպոս Տէր Յարութիւնեանին. իսկ Նորին Գերապատուութեան տեղը Նախիջևանի յաջորդ նշանակեց Արժ. Յովսէփ Վարդապետ Փինաչեանցին։

—

29 Օգոստոսի. Սինոդը յանուն Ճեմարանի Մայր Աթոռոյս ստացաւ նուէր Արժ. Դաւիթ Աւագ Քահանայի ամսոյս 8ին յայտարարութեամբ 10 բուբլի նուէր երկրորդ քառամսեակի համար, ստացման մասին տեղեկութիւն տալով յիշեալ Աւագ Քահանային՝ հրամանագրեց Մայր Աթոռոյս Գանձապահին գրել մուտք։

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ.

20-ն Յուլիսի, Նոր Արմաւրայ Յարութիւն քահանայ Խաչերեսեանին, որ զանազան կանոնազանցութիւններ, և չհաստութեան աստիճանի պսակներ էր կատարել առանց թոյլ տուութեան, թէ և հարկ էր կարգալոյծ անել, սակայն Սինոդը զիջանելով յիշեալ քահանայի թախանձագին աղերսանաք մեղայականին՝ որով խոստանումէր այլ ևս նոյն օրինակ կանոնազանցութեանց մէջ չըդտնուել, որոշեց ընդ հսկողութեամբ տեղւոյն գործակալի՝ եկեղեցու դրանը, առանց փիլոնի Սաղմոս ի ձեռին ապաշխարութեան ենթարկել. քահանայական հասոյթի համար տնօրինելով ինչ որ կարգադրուած է հայրապետական կոնդակով այսպիսի դէպքերի ժամանակ։

ԴՊՐՈՑԱԿԱՆ.

27 ն Յուլիսի Սինոդը ի նկատի ունելով Ալէքսանդրապոլու յաջորդութեան Դիւզքեանդ գիւղի հասարակութեան խնդիրը և Ալէքսանդրապոլու Հոգևոր Կառավարութեան միջնորդութիւնը, թոյլ տուեց տեղւոյն եկեղեցական 275 բուբլի դրամով եկեղեցու մօտ Հոգ. ծխական դպրոց շինել, պակասորդը լրացնելով ուրիշ արդիւնքից։

27-ն Յուլիսի, Նոր Բայազէդու և Դարաչիչակի գործակալ Պետրոս Վարդապետի տարեոյս Յուլիսի 6-ին յայտարարութեամբ առաջարկուած Նոր Բայազէդու Հասարակութեան Համախոսականին համեմատ տեղւոյն երկսեռ դպրոցների համար հաստատուեցին Պ. Յարութիւն Մամիկոնեան՝ նախագահ Հոգաբարձութեան, պարոնայք Մատթէոս Ափրիկեանց, Հայրապետ Խաչատրեանց և Գէորգ Արծրունի՝ հոգաբարձու, իսկ Պ. Ստեփան Բատիկեան հոգաբարձու և տեսուչ։

—

27 Օգոստոսի Սինոդը ի նկատի ունելով որ Մայր Աթոռոյս ձեմարանում 171 որդեգիր աշակերտների պիտոյքը հաղիւ է հոգացվում նիւթական միջոցաց սղութեան պատճառով, որոշեց, քննութեամբ ընդունել միայն հոգևոր դպրանոցների դասընթացք աւարտող այն աշակերտներին՝ որոնք կարող կըլինին մտնել 6-րդ դասատուն և լսարանները. իսկ ստորին դասարաններից մինչև 5-րդ դասարանը դիշերօթիկ որդեգիր աշակերտ բնաւ չընդունել։

Հողակաթի վանուց վանահայր Մկրտիչ Վարդապետ Շահնազարեան անցեալ Օգոստոս ամսոյ 31-ին 45 տարեկան հասակում վախճանուեց և պատշաճաւոր յուղարկաւորութեամբ թաղուեց նոյն վանքի պարսպում եղած գերեզմանոցում։

Հանգուցեալը ուսել էր Մայր Աթոռոյս Հոգևոր Դպրանոցում և ստացել էր սարկաւագութիւն 1864 թուի Ապրիլի 25-ին, Աբեղայութիւն՝ 1865 թ. Մարտի 14-ին, իսկ մասնաւոր վարդապետութիւն 1878 թ. Մայիսի 16-ին։

Լուսաւորեսցէ Տէր հանգուցելոյ հոգին և մարդկօրէն սխալանացը ներումն շնորհելով՝ իւր Սուրբ տեսութեան արժանացնէ։